115

Էլմ. 592

1. Ուրախ եղեք, ո՛վ արդարներ,
Դուք, որ Տերն ունիք ձեզ բաժին,
Փառքով ցնծացե՛ք միշտ ի Տեր,
Վիշտ ու նեղություն անհետին:

Ուրախ եղե՛ք,
Ուրախ եղե՛ք դուք Տերոջմով:

2. Ուրախ եղեք, զի Նա է Տերն
Երկնից և երկրի գերագույն,
Խոսքովն ստեղծեց
աշխարհներ,
Կարող Փրկիչն է ամենուն:

3. Ի՜նչ փույթ, թե մարտին մեջ
արդար
Ոսոխն բազմաթիվ երևի,
Տերոջ բանակներն են ստվար,
Հզոր, համրանքով ավելի:

4. Երբ որ խավարի հոս երկիր,
Երկինք ալ ամպով ծածկվի,
Երբեք անոնց մեջ մի՛ տխրիր,
Տերոջ վստահե, պիտ անցնին:

5. Ուրախ եղեք միշտ Տերոջմով,
Փրկյալք Իր փառքով թող
ցնծան,
Ձայնով, տավիղով, քնարով
Ալելուիաներ բարձրանան:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025